



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

104

8
d-28

2011

2003

Հ. Արքայ

№ 3

ԺԱՆՆԱ Տ'ԱՐՔ
ԳԱՂՂԻԱՅԻ ԱԶԱՏՈՂ



8
Ճ-22

8
ժ - 28
ԱԿ



ԺԱՆՆԱ Տ'ԱՐՔ



Ե.

1061
4697

Անիկա՝ ինչ որ կը կամենամ ձեզի պատմել, պատահեցաւ մօտ չորս հարիւր տարի ասիկց առաջ: Ե՛յն ատեն Գաղղիացիք կը պատերազմէին Անգղիացւոց դէմ: Գաղղիացիք չարաչար կը յաղթուէին Անգղիացիներէն և շուտով պիտի կորսնցնէին իրենց Փարիզ մայրաքաղաքը:

Եւ՛հն զիւղացի, ամէն քաղաքացի սարսափելով կը ձգէր իւր տունը, իւր դաշտը և կը փախէր:

Եւ՛հն մարդ կորուսեր էր ազատուելու յոյսը և միայն իւր փրկութեան վերայ կը հօգար:

Եւ՛հն տեղ միայն հեծե՛ծանք և անէ՛ծք կը լսուէր . . . :

Օրվան քաղաքէն ոչ այնչափ հեռու, որ պաշարուած էր Անդղիացիներէն, փոքրիկ գիւղ մը կար Տօմարէմի անունով:

Այս գիւղին ծայրը, անտառին մօտ է խեղճիկ խրճիթ մը:

Մանէնք այս խրճիթը:

Իրիկուն է. կտորած, իւզով լի կանթեղ մը ազօտ կը փայլէ խրճիթին մէջ: Տ'Արք անուկով գիւղացու ընտանիքը ընթրիք կ'ընէ:

Սեղանին առջեւ նստած է ինքն՝ ծեր տ'Արք և իւր երկու կտրիճ՝ որդիքը — Պետրոս և Ալեքսան:

'Նորահաս Ժաննան՝ տ'Արքին աղջիկը անոնց կը ծառայէ:

Ընթրողները խոր լուռութեան մէջ են. անոնց երեսները տխուր և դառնահայեաց են:

— «Հայր իմ» ընդմիջեց լուռութիւնը անդրանիկ որդին. «արգիօք նոր լուր մը կ'սոյ Անդղիացուց մասին...»:

— «Նոր լուր», դառնութեամբ պատասխանեց հայրն, «նոր լուրն այն է, որ Օրվան երկրք օրէն Անդղիացուց ձեռքը պիտի իյնայ»:

— Ըսել է որ մենք ալ պիտի փախչինք աստից...:

— Այո՛, պիտի փախչինք:

Պարձեալ տիրեց սենեկին մէջ խորին լուռութիւն...:

— «Հայրիկ», գողգոջուն ձայնով հարցուց յանկարծ Ժաննա, «հայրիկ, միթէ թուլացան Պաղղիացուց ձեռքերը, միթէ անոնց սրտերը դադարեցան բարախելէ, միթէ չե՞ն կրնար անոնք վռնակ Անդղիացիները...»:

— Լուռ կեցիր, յիմար, դուն բան մը չես հասկընար. սեղանը վերցուր և պառկէ՛, քնանալու առենք եկաւ:

Ընթրիքը վերջացաւ:

Խրճիթին մէջ տիրեց խորին լուռութիւն. կը լսուէր միայն քնացողներու խրխուալը, և ծըղրիզի պարզ երգը...:

Ամէնքը խոր քնոյ մէջ են, ամէնքը կը նընջեն, Ժաննան է միայն որ չկրնար քնանալ...: Շատ անհանգիստ է, անկողնին մէջ փոռած՝ մէկ կողմէն միւսը կը դառնայ, բայց չկրնար քնանալ:

Արթուրի իրեն կռիւ մը, սարսափելի կռիւ.
կը լսէ նիզակներու ձայն, թուրերու շփումն . . . :

Ահա իւր սիրելի Պաղղեացիք, դունատուած,
յոգնած, արիւնթաթախ կը պատերազմին . . .
նա՛ ինքն անոնց առջեւն է, նա՛ անոնց հրամա-
նատարն է . . . :

Սարսափելի կռիւ է, չին կրնար դիմանալ
Անգղիացիք. կը ձգեն իրենց թուրերը, իրենց
նիզակները և կը փախչին, ետ կը քաշուին. իսկ
նա՛ իւր սիրելի հայրենակիցներով կը հալածէ,
կը վռնտէ զանոնք, կ'ազատէ իւր սիրելի հայ-
րենիքը — Պաղղեան:

— «Աստուած իմ, այս ի՞նչ է», ուշի գա-
լով կ'ըսէ ժաննա. «ո՛ւր եմ». նա ամէն կողմ
կը նայի. — ահա՛ իւր հայրը, ահա՛ եղբարքը . . .
նորէն ինքզինքը կը մոռնայ ժաննա, նորէն
կ'օրօրուի անկողնոյ մէջ, նորէն կը թուին ի-
րեն պատերազմներ . . . :

Յանկարծ նա դողաց. թուեցաւ իրեն որոշ
ձայն մը, որ կը կանչէր զինքը «ժաննա»:

— «Հայրիկ, դ՞ուք կը կանչէք . . . »:

Պատասխան չկայ . . . ամէնքը քնացած են:

— «ժաննա», նորէն լուեցաւ ձայնը . . . :

— «Նս հոս եմ, կը լսեմ . . . » հազիւ հազ
շշնչեց աղջիկը:

— «ժաննա», երրորդ անգամ լուեցաւ
ձայնը. — վաղ առաւօտ դնա՛ Օրլէան և ըսէ
թագաւորին՝ որ ես քեզ ուղարկեցի. խնդրէ՛
իրմէ զօրագունդ մը և Պաղղեոյ հին դրօշակը.
Անգղիացիք պիտի յաղթուին . . . :

ժաննան ինկաւ ծնդերուն վրայ և սկսաւ
աղօթել:

— «Մայր Աստուածածին, սուրբ կոյս, դու
պաշտպան ամէն տառապեալներու և անկա-
րողներու, սորվեցո՛ւր ինձ թէ ի՞նչ պիտի ը-
նեմ»:

— «Գնա՛ և ըրէ՛ այն՝ ինչ որ կը պատուի-
րեմ քեզ», անգամ մ'ալ լուեցաւ ձայնը . . . :

ժամանակը արշալոյսին մօտ էր. աստղերը
սկսան հեռզհեռէ աներեւոյթանալ. արեւելքի
կողմը երեւցաւ լուսաւոր կարմիր շերտ մը.
փչեց առաւօտեան հովը և շարժեց կաղնոյ
տերեւները որ կեցած էր խրճիթի պատուհա-
նին մօտ. վերջին անգամ մ'ալ խօսեցան ա-

քաղաղները: Ժաննա անկողնէն ելաւ, աղօթք
 րուաւ և հագուեցաւ: Յետոյ մօտեցաւ քնա-
 ցած հօրը, քնացած եղբայրներուն, երկար ա-
 տեն նայեցաւ անոնց վրայ, համբուրեց զա-
 նոնք . . . վերջապէս իւր նայուածքն խրճիթին
 վրայ դարձնելով «մնաս բարեա՛ւ, հայրենի
 տուն, մնաս բարեա՛ւ, հայրիկ, մնաք բարեա՛ւ,
 եղբարք» վերջին խօսքերը արտասանեց. յետոյ
 խրճիթէն դուրս ելաւ, ուղղուեցաւ դէպի ան-
 տառին ծայրը և Օրլէանի ճամբան բռնեց:



Բ.

Պաղղիացւոց զօրքը, արքունիք և ինքը
 Թագաւորը կը գտնուէին Օրլէանի մէջ: Ամ-
 բողջ ամիս մը կը դիմանար այս քաղաքը պա-
 շարման դէմ և անձնատուր չէր լինէր Անգ-
 ղիացւոց: Բայց ամսոյ վերջին օրերուն մէջ
 անտանելի եղաւ բնակիչներուն տանել պաշար-
 ման չարչարանքները: Քաղաքին մէջ սով տի-
 րեց: Մարդիկ հարիւրներով կը մեռնէին: Ո-

չոշեցին երեք օրէն ետքը քաղաքը յանձնել
 Թշնամեաց ձեռքը: Սաստիկ վհատութիւն կը
 տիրէր: Ամէն մարդ իւր տան մէջ փակուած
 էր և տունէն չէր մեկնէր: Փողոցներու մէջ
 մարդ չէր երեւնար, միայն երբեմն երբեմն
 կ'անցնէին զինուորներ, մահուան պէս տժգոյն,
 թմբրած . . . :

Ժամանակը երեկոյին մօտ էր:

Փողոցի մը ծայրը որ արքունի պալատին
 մօտ կը գտնուէր, երեւցաւ անձ մը՝ սաստիկ
 փոշոտուած, յոգնած: Անիկա Ժաննան էր:
 Ասոր անոր հարցունելով, հագիւ կրցաւ հաս-
 նիլ քաղաքը: Օրլէանը առաջին անգամ կը
 տեսնէր նա: Բարձր տուներ, լայն փողոցներ,
 տարօրինակ կը թուէին իրեն: Բայց այժմ նա
 հետաքրքիր չէր այս բաներուն: Միայն Թա-
 գաւորը կը ցանկար տեսնել: Սակայն ի՛նչպէս
 իմանար ո՞ւմ հարցնել փողոցներու մէջ զրիթէ
 մարդ մը չկայ. երբեմն երբեմն անցնող մար-
 դիկ ստուերի պէս կ'անյայտանային ու կը հե-
 ուանային: Աւերջապէս, իւր բոլոր ոյժը ժող-

վերով, մօտեցաւ նա դէպի բարի դիմօք (ինչպէս իրեն կ'երեւնար) ծեր մարդու մը:

— Տէր, ներէ՛ համարձակութեանս, իրտեղ մի գտնուի թագաւորը:

— Թագաւորը: Ի՞նչ գործ ունիս թագաւորին հետ:

— Անպատճառ պէտք է ես զինքը տեսնեմ:

— Անպատճառ պիտի տեսնե՞ս զինքը, տարակուսանօք ըսաւ ծերը:

— Այո՛, այո՛, կ'աղաչեմ, տէր, մի՛ մերժէք ինդիրքս:

— Շատ աղէկ, շատ աղէկ... երթանք, կը ցուցնեմ քեզ, պատասխանեց ճամբորդն և աղջկան հետ միասին դէպի արքունի պալատը դիմեց:

Պալատին մէջ, թագաւորն իւր նախարարներուն և սպարապետին հետ խորհուրդ կ'ընէին: Սաստիկ վիճաբանութեան մը բռնուած էին. ոմանք կը համոզէին զթագաւորն, որպէս զի առանց պատերազմի քաղաքը յանձնէ թըշնամեաց ձեռքը, ըսելով թէ՛ արդէն չափազանց արիւն թափուած է այս պատերազմիս մէջ,

թէ՛ զինուորք կը մերժեն պատերազմիլ թըշնամեոյն հետ: Այլ՝ և անոնց մէջ զիտաւորապէս Պաղղիացեոց սպարապետը, Տիւնուա, կը խրատէին անգամ մ'ալ պատերազմիլ:

— «Արդեօք կրնանս, Տիւնուա, դու կրաշխաւոր ըլլալ որ այս անգամ ալ քու զինուորները չպիտի յաղթուին և ամօթով չպիտի փախչին պատերազմէն»:

Տիւնուա մուսյլ կերպով զըլին խոնարհեցուց և բնաւ չպատասխանեց:

Թագաւորն արդէն պատրաստ էր անձնատուր լինելու թուղթը ստորագրելու, երբ յանկարծ բարձր ձայն մը լսուեցաւ, «Թողէ՛ք ինձ թագաւորին մօտ, ես զինքը պիտի տեսնեմ... Թողէ՛ք ինձ, Թողէ՛ք...»:

— «Վնաս, տես ի՛նչ կայ հոն», հրամայեց թագաւորն իւր թիկնապահին:

— «Աղջիկ մը անպատճառ կ'ուղէ Ձեր Վեհափառութիւնը տեսնել», ըսաւ թիկնապահը վերադառնալով:

— «Ի՛նչ գտնի հոս»:

Բոպէ մ'հաքքը, Ժաննա (անիկա նոյն ինքն
Ժաննան էր) մտաւ թագաւորին սենեակը:

— «Ի՞նչ կը կամենաս աղջիկս», հարցուց
թագաւորը փափկութեամբ:

Ժաննան՝ այլայլեալ և հրացայտ աչերով
ակնարկ մը նետելով թագաւորին վրայ, ըսաւ.

— «Ես կը կամենամ, տէր արքայ, որպէս զի
Գաղղեոյ թագաւորը ազատէ իմ հայրենիքս»:

Օարմանքով նայեցաւ թագաւորը աղջկան
երեսին:

— «Գնա՛, աղջիկս, գնա՛, և մի ձանձրացնէր
զեւ դատարկ խօսքերով»:

Իսկ Ժաննան տեղէն անգամ չջարժեցաւ:

— «Ես կը կամենամ, որպէս զի դու ազա-
տես Գաղղեան», կրկնեց նա երկրորդ անգամ:

Թագաւորին դէմքը այլայլեցաւ:

— «Օ, ի՛նուոր, հեռացո՛ւր աստի այս աղ-
ջիկը», հրամայեց նա:

Այն ատեն Ժաննա ծնգերուն վրայ ինկնելով,

— «Տէր իմ, թագաւոր իմ, ես կը կամենամ,
որպէս զի դու ազատես իմ հայրենիքս, սուրբ
կոյս Սարիամ ինքն ուղարկեց ինձ ձեզ մօտ»:

Թագաւորը տարակուսական հայեացք մը
նետեց Տիւնուային, և ըսաւ.

— «Եկո՛ւ, աղջիկս, եկո՛ւ և բացատրէ մեզ,
ի՛նչպէս սուրբ կոյսն ուղարկեց քեզ ինձ մօտ»:

Այն ատեն Ժաննա պատմեց թագաւորին
իւր տեսիլը:

— «Ի՞նչ կ'ըսես այս մասին, Տիւնուա՛, ը-
սաւ թագաւորը սպարապետին»:

— «Վեհափառ տէր, եռանդով պատասխա-
նեց Տիւնուա, կ'աղաչեմ Ձեր Վեհափառու-
թեան, թո՛յլ տուէք ինձ անգամ մ'ալ պատե-
րազմիլ թշնամեաց հետ, թո՛յլ տուէք այս աղ-
ջկան պարզել Գաղղեոյ հին դրօշակը և զօրա-
գունդ մը . . . »:

Թագաւորն իւր գլուխը խոնարհեցուց և
խորին մտածմանց մէջ ինկաւ:

— «Շա՛տ լաւ, Տիւնուա, ըսաւ նա իւր
գլուխը բարձրացնելով, շա՛տ լաւ, ուղածդ կա-
տարէ՛, պատրաստէ՛ զօրքը պատերազմի, սո՛ւր
այս աղջկան իւր պահանջածը . . . »:



Գ.

Յաջորդ օրը առաւօտուն, արեգական առաջին ճառագայթներու փայլման հետ՝ Տիւնուա հաւաքեց զօրքը:

Օխնուորները տեղեկանալով որ զերենք անգամ մ'ալ կը կամենան պատերազմի տանել, կը դժկամակէին: «Միթէ բաւական չէ՞ որ մեզմէ շատերը իրենց կեանքը զոհեցին այս պատերազմիս մէջ, որ այժմ ալ մեզի կը տանին ոչխարներու պէս մորթուելու»:

Տիւնուան իւր վրանէն դուրս գալով,

— «Անչեցէք ժաննան» հրամայեց նա:

Ժաննան յանկարծ երեւան եկաւ:

Նա բոլորովին նման չէր երէկուան խեղճ, վախկոտ զիւղացու աղջկան, որ կամաց կամաց, ամէն կողմ դիտելով կը մօտենար դէպի Օրլէան. այլ՝ զինուոր մ'էր պողպատով և երկաթով զրահաւորուած: Օրասը կը շրջապատէր իւր գեղեցիկ կուրծքը. քակած մազերով գլխին վրայ գոռոզաբար կը նստէր սաղաւարտը, և արեգական ճառագայթները կը փայլէին անոր վրայ:

Մէկ ձեռքին մէջ վստահօրէն բռնած ունէր նա թուրը, միւսին մէջ Պաղղիոյ հին դրօշը: Օխնուորները զարմացած աչքերնին յառած էին այս աղջկան վրայ:

Ժաննա բնաւ չը շփոթեցաւ. հանդարտ և ուրախ ու զուարթ դէմքով կը նայէր նա ամենուն:

Տիւնուա հիացման ակնարկ մը նետեցաղջկան վրայ և դառնալով իւր զինուորներուն սկսաւ այսպէս խօսիլ:

— «Օխնուորներս, ըսաւ նա, քաջ զինուորներս, անգամ մ'ալ կը կամենամ տանել ձեզ պատերազմի: Փորձէ՛նք վերջին անգամ մ'ալ ազատիլ մեր հայրերը, մայրերը, քոյրերը, եղբայրները և զաւակները. միթէ լոլորովին որընչացա՞ւ հին Պաղղիան. միթէ ամէն ինչ պիտի տանք այս անօրէն անիծեալ Անդղիացուց և մենք անարգ երկչոտներու պէս փախչի՞նք: Նրդուի՛նք ուրեմն այս սուրբ դրօշակին որ այսօր կամ պիտի յաղթենք և կամ պիտի մեռնինք: Նայեցէք այս աղջկան, սուրբ կոյսն ուղարկեց զինքը հոս: Ո՛վ որ կը կամի իւր հետ երթալ, թող առաջ գայ:

Տիւնուա աւարտեց խօսքն, նայեցաւ զօրքին, բայց ոչ ոք տեղէն չէր շարժէր. ամէնքը լռութեան մէջ էին. տեղ տեղ միայն « իրեն նայէ, աղջկան հետ առաջ երթանք . . . երթանք սպաննուելու », կը լսուէր:

— « Օ-ինուորներս, անգամ մ'ալ հարցուց Տիւնուա, ուրեմն ոչ ոք կը կամենայ աղջկան մը հետ երթալ »:

Այս անգամ ալ լռութիւնը պատասխան էր Տիւնուայի խօսքերուն:

Այն ատեն Թաննա սկսաւ այսպէս խօսիլ:

— « Հարք և եղբարք, ըսաւ նա, ուրեմն ձեզ նէ ոչ ոք չը կամենար օգնել խեղճ Քաղղիացի-ուհու մը՝ որուն իղձն է աղատել մեր ազգը: Մտաբերեցէք որ դուք ամենքնիդ ունիք հայր, մայր, քոյր, եղբայր. թէ անոնք կը նային ձեզ կը սպասեն որ դուք զիրենք մահուանէ և գերութենէ ազատէք. միթէ ոչ ոք ինձ հետ չը պիտի միանայ. աւճղ, այն ատեն սպանեցէք զես, սպանեցէք ձեր այդ թուրերովն, որպէս զի Քաղղիուհի մը չկարենայ տեսնել Քաղղիա-

ցւոց երկիւղը . . . աւասիկ սիրտս, ես կը սպասեմ հարուածին »:

Թաննա ծունդերուն վրայ ինկաւ:

Ամբօխը սաստիկ յուզուեցաւ Թաննայի խօսքերէն, որոնք ուղղակի անոնց սրտին դպան. զինուորներուն մէջտեղէն ելաւ պատանի մը, գրեթէ բոլորովն մանուկ:

— « Աս կը կամենամ երթալ », ըսաւ նա, իւր գլուխը խոնարհեցնելով:

Նորա օրինակը ողելորութիւն պատճառեց ուրիշներուն:

— « Աս ալ կ'երթամ », ըսաւ ուրիշ մը:

— « Աս ալ կ'երթամ . . . ես ալ կ'երթամ . . . » լսուեցաւ ամէն կողմէ, և շուտով Թաննայի շուրջը հաւաքուեցան գրեթէ 200 մարդիկ. կային հոն պատանիներ, տղամարդիկ, նաեւ ծերունիներ:

Թաննան, արտասուելով, « շնորհակալ եմ, շնորհակալ եմ » միայն կրցաւ պատասխանել:

— « Փողհարներ, հնչեցէք յարձակման նշանը » գոռաց բարձր ձայնով Տիւնուա:

Գ.

Արդէն ամբողջ օր կը պատերազմէին Անդրիացիք և Գաղղիացիք, պատերազմը սաստիկ էր և կատաղի, առիւծի պէս կը փատերազմէին Գաղղիացիք: Ամենէն առաջ Ժաննան ինքը կը նետուի թշնամեաց զօւնդերուն մէջ, անոր մազերը կը ծածանին, իւր աչիւրը կայծեր կ'արձակեն, Անդրիացւոց թիւը հեռոյհեռէ նուազել կսկսի:

— «Պախարդ է, կախարդ», սոսկալով կը պոռան Անդրիացիք, «սատանան ինքը Գաղղիացւոց կողմը կը բռնէ»:

— «Յառաջ արշաւեցէ՛ք, Անդրիացի՛ք, մի՛ վախնաք աղջիկէ մը, հարուած մ'ալ և ահա՛ պիտի յաղթուին Գաղղիացիք» կը գոռայ Անդրիացւոց սպարապետը:

— «Սուրբ կոյս... Գաղղիա՛», ... կ'ազազակէ Ժաննա, «յառաջ, յառաջ, տեսէ՛ք թշնամին ետ ետ կը քաշուի...»: Պատերազմը երթալով կը սաստկանայ, արիւնը հեղեղի նման կը վազէ, Անդրիացւոց թիւը երթալով կը նուազի.

յառաջ կ'արշաւեն Գաղղիացիք, Ժաննանսար սափելի հարուած կը տեղայ թշնամեաց զնդերուն... և ահա՛ Անդրիացիք ետ կը քաշուին:

— «Հարուած մ'ալ, զինուորնե՛րս, հարուած մ'ալ և մենք յաղթեցինք» կը գոռայ Ժաննա ողորուած ձայնով, «սուրբ կոյսն մեզ հետ է...»:

Բողբոլիւն կը յաղթուին Անդրիացիք, իսկ Ժաննա կը հալածէ զանոնք, մահ կը սփռէ ամէն կողմ: Անդրիացիք սարսափելով կը փախին, «կախարդ է, կախարդ, մենք կորած ենք»:


— «Քաջ եղիք, զինուորնե՛րս», յուսահատելով կը գոչէ Անդրիացւոց սպարապետը, «ո՛ւր կը փախչիք»:

Անդրիացիք ի փախուստ կը դառնան:

Նրկար ժամանակ կը հալածեն Գաղղիացիք իրենց թշնամին: Մէկ երկու օր կ'անցնի, բայց դարձեալ ի փախուստ կը դառնան Անդրիացիք:

Չովը հեռուանց կը տեսնուի, Գաղղիացիք տակաւին կը հալածեն... ահա՛ Անդրիացիք նաւերէն վեր կը մտնուին, կը լողան, կը հեռանան Գաղղիայէն...:

Փրկուեցա՛ւ, ազատուեցա՛ւ Գաղղիա:



Ե.

Պաղղիոյ զօրքը յաղթանակը կը տօնէ: Թագաւորը, սպարապետը, զինուորները ամէնքն ալ կ'ուրախանան. ամէնուն դէմքին վրայ ուրախութիւն կ'արտայայտուի:

Ասպասեն ժաննային, այդ ամէն յաղթութեանց դիւցազնին. բայց նա տակաւին չերեւնար. ժամեր կ'անցնին, սակայն ժաննա անբեւոյթ եղած է . . . :

— «Տիւնու՛, ո՛ւր է ժաննան, ո՛ւր է մեր ազատիչը», անհանդատութեամբ կը հարցնէ թագաւորը:

— «Չեմ գիտեր, Վահագառ Տէր, վերջին անգամ ես տեսայ զանի այս առաւօտ . . . նա՛ ամենէն առաջ էր»:

Երկար ատեն կ'անցնի, բայց զեռ չերեւնար ժաննա:

Ամենուն երեսը տխրութեամբ կը ծածկուի. ուրախութիւնը արտամութեան կը փոխուի, վասըն զի ժաննան ներկայ չէ:

— «Ամէն կողմ սուրհանգակ ուղարկեցէք», կը հրամայէ թագաւորը:

Երեկոյ է արդէն, բայց ժաննա դարձեալ չերեւնար:

Հեռուէն պատգարակ մը կը տեսնուի. երկու զինուոր կը կրեն զանի. պատգարակին մէջ աղջիկ մը պռուկած է:

Պատգարակը կը մօտենայ: Ամենքը կը դիմեն ընդ առաջ: Անոր մէջ է ժաննան: Մահուան տագոնութիւնը ծածկեր է անոր երեսը. կուրծէն կաթիլ կաթիլ արիւն կը հոսէ:

Պատգարակը զգուշութեամբ վար կը զնեն: Թագաւորը ծունգի վրայ դալով, կըսկսի կոչել:

— «ժաննա, ժաննա», պատասխան չկայ. Թագաւորը իւր բոլոր ուժով կրկին կը կոչէ «ժաննա»:

Այն ատեն ժաննա աչուրները կը բանայ. երանութեան ժպիտ մը կը փայլէ անոր դէմքին վրայ. ձեռքի թիթեւ շարժումով կը կանչէ զինքը շրջապատողները . . . : Ամենքը կը դիմեն իւր առաջ:

— «Ես վերաւորուեցայ . . . ես պիտի մեռնիմ, . . . պարտքս կատարեցի . . . Պաղղիա ազատուած է . . . տուէք ինձ իմ դրօշակը . . . հո՛ս

է... ծածկեցէ՛ք զևս անով... անոր տակ կը
մեռնիմ... Թո՛ղ Աստուած փրկէ Պաղղիան...
..... :

Ժաննայի աչերը սեւեռեցան դէպի երկինք...
իւր դէմքը երկնային արտայայտութիւն մը
ստացաւ. քանի մը Թո՛ղ շունչեր եւս և ահա՛
մեռաւ մեծ դիւցազնուհի կոյսն... :



Վ Ե Ր Չ Ա Ր Ա Ն

Փարիզի անուանի փողոցներէն միոյն վրայ
կը բարձրանայ փառաւոր յիշատակարան մը:
Նա կը ներկայացնէ ձիու վրայ հեծեալ աղջիկ
մը, սպառազինեալ և դրօշակ ի ձեռին:

Յիշատակարանին վրայ գրուած է.

« Փրանսայի ազատիչ

« Ժաննա տ'Արքին.

« Նուէր Պաղղիացիներէն » :

Дозволено цензурою. С.-Петербургъ, 29 декабря 1886 года.

Типографія И. Н. Сербскаго (Надеждинская, № 39).

ԳԻՆՆ Է

10. 1. Ուրիշի գերեզմանի վրայ առանց
արտասուքի են լաց լինում . . . 5 կ.
2. Բուլղար աւազակապետ 5 »
3. Ժամնատ՝ Լ. ք. Վաղղիայի ազատող. 3 »

Ս. ՊԵՏԵՐՈՎԻՉԻ
ՏՊԵՐԵՆ Ի. Ն. ՍԿՈՐՈՒՄԻՆՈՎԻ
1887.

Koema

104

104

2013

